# ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՏՕՆԸ

—o—

## ԹԵՄԱԿԱՆ ՄԱՄՆԱԺՈՂՈՎԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԸ

—

Յանձնաժողովը յունիսի 14-ին իր երկրորդ նիստին որոշեց.

1. Դպրոցական ֆոնդի հանգանակութիւնը կատարել միաժամանակ ամբողջ թեմում՝ երկու շաբաթ ժամանակի ընթացքում. ընդհանրական հանգանակութեան համար պատրաստել կոչ և հրահանգ՝ թաղական խորհուրդներ կազմակերպելու ամեն տեղ. հանգանակութեան ժամանակ որոշել սեպտեմբերի 15-ից մինչև 30-ը։

2. Որոշուեց յոբելեանական տօնի առիթով հրատարակել մի գրքոյկ, որ պարունակէ իր մէջ՝ հայոց տառերի նմոյշներն իրանց զարգացման համառօտ նկարագրութեամբ, տպագրութեան համառօտ պատմութիւնը, ս. Սահակ և Մեսրոպ, Ներէս Շնորհալու և մի քանի նշանաւոր պատմական անձերի պատկերները. և այս հրատարակութիւնը մեծ քանակութեամբ ցրել կոչի և հրահանգի հետ։

3. Տալ տառերի գիւտի և տպագրութեան համառօտ կոնսպէկտ աղբիւրների ցանկով՝ դասախօսել ցանկացողների համար։

4. Որպէսզի դասախօսութիւնները միակողմանի բնոյթ չունենան, ցանկալի համարուեց յայտարարել թեմաներ տառերի գիւտի շրջանի և առհասարակ մեր ազգային-գրական զանազան մոմէնտների վերաբերեալ՝ դասախօսողներին նիւթ մատակարարելու համար։

---

## ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՏՕՆԸ ԵՒ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅ-ԿԱԹՈԼԻԿՈՒԹԻՒՆԸ

(Մի համեստ առաջադրութիւն)

—

Կարս, 15 յունիսի

Չենք կարող կասկածել, որ համազգային մեծ տօնին կը մասնակցեն ընդհանուր հայ-կաթոլիկութիւնը և մասնաւորապէս Ռուսաստանի հայ-կաթոլիկները և որովհետև վերջիններիս հոգևոր գործերի կառավարութիւնը յանձնուած է Առաքելական կառավարիչ հայր Սարգիս Ծ.-վ. Տէր-Աբրահամեանին, մեր համեստ կարծիքով, գերապատիւ հօր վրայ է ծանրանում այս մեծ տօնին մասնակցելու ձեռներէցութեան պարտաւորութիւնը, իր անմիջական իշխանութեան տակ գտնուած բոլոր թեմերը հրահանգներ ուղարկելով։ Գործելակերպի և այլ ցուցմունքներ տալն ի հարկ է, հայր Տէր-Աբրահամեանից է կախուած, միայն ցանկալի է, որ 1) համազգային այս մեծ տօնին մասնացելը պաշտօնական բնոյթ ունենայ, 2) տօնը կատարուի մի օրում բոլոր կաթոլիկական վայրերում և 3) հանգանակութիւն բացուի, որին մասնակցի ամեն մի կաթոլիկ հայ անկախ իր դիրքից, միջոցներից, սեռից և մինչև անգամ հասակից։ Թէ արանց սիրայօժար նուէրներից հաւաքած գումարները ինչ նպատակի պիտի գործադրուի, այս բանը կարելի է որոշել մի մասնաժողովում, որը կը կազմուի կենդրոնում, առաքելական կառավարչի նախագահութեամբ, ի հարկէ նախապէս տեղեկանալով և յարգելով նուիրատուների մեծամասնութեան կարծիքը։

Մ. Ն. Ոսկան